զանիցին, և յետ այսորիկ այլք յափշտակեսցեն, կամ եղև զի անդրէն տացեն որում խօսեալն էր. թէև 'ի բռնութիւն ապաստանիցէ. մի՛ թողցեն։ Մի զզուգեալն և զխօսեալն համարի և անդրէն դարձուցանել, թէև պսակիցի ընդ յափշտակողին»[1]*)։ Վերջապէս երրորդ, այն է ՂԶ յօդուածն ամբողջովին առնուած է Շահապիվանի ժողովի մեր յիշած 7-րդ կանոնից ինչ ինչ յաւելումներով։ Սոյն վերջին յօդուածին Մխիթար Գօշը մեծ նշանակութիւն է տալիս, առաջարկելով դատաւորներին ու եպիսկոպոսներին ուշադրութեան առնել այդ օրէնքն և ըստ այնմ էլ վարուիլ խիստ հետևողութեամբ։*

Ներսէս Շնորհալին իւր «Ընդհանրականի» մէջ 'ի միջի այլոց դատապարտում է, և խստիւ արգելում առեւանգման սովորութիւնը։ «Մի՛ և այնոցիկ՝ որք առեանգս ասին, զնիցէ պսակ, զի հակառակ օրինաց Աստուծոյ է և բիւրք չարեաց պատճառք 'ի սատանայէ շարժեալք 'ի մոլեկան ախտս»[2]*)։*

Նմանապէս վրաց թագաւոր Վախթանգի Դատաստանագրքի մէջ «Հայկական օրէնքներ» վերտառութեամբ յայտնի բաժնում գտնում ենք 62-րդ յօդուածը, որ վերցրած է «Ասորա-հռովմէական օրինագրքից» և որը վերաբերում է առեանգութեան. «կոյս աղջկան առեանգողը պէտք է մահուան պատժի ենթարկուի։ Եթէ երիտասարդը ոչ մի յարաբերութիւն չի ունեցել աղջկայ հետ և փախցրել է նրան փոխադարձ համաձայնութեամբ, այն ժամանակ առեանգողը պատժւում է իբրև շնացող»[3]*)։*

---

[1]) *Մխիթար Գօշի՝ Դատաստանագիրք հայոց՝ հրատ. Վ. Վ. Բատամեանի, եր. 151.*

[2]) *Թուղթ ընդհանրական՝ Ներսէս Շնորհալու. Ս. Էջմիածին, 1865 թ. եր. 83.*

[3]) Сборникъ законовъ грузинск. царя Вахтанга II. Изд. О. С. Френкеля, стр. 246.

Հայ մատենագրության թուանշային գրադարան